ՀՐԱԺԵՇՏԻ ԱՀՔԵՐԸ

ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ

ԵՐՄԻՆԵ ԱՎԱԳՅԱՆ

ՀՐԱԺԵՇՏԻ ԱՉՔԵՐԸ

ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ

new

ԵՐԵՎԱՆ
2025

ՀՏԴ 821.19-32 Ավագյան
ԳՄԴ 84(5Հ)-44
Ա 770

Ավագյան Հերմինե
Ա 770 Հրաժեշտի աչքերը: Պատմվածքներ / Հ. Ավագյան.- Եր.: Newmag, 2025.- 76 էջ:

Մարդկային խեղված ճակատագրեր, ժամանակից շուտ մեծացած երեխաներ, հայրենի տունը լքելու պարտադրանք, կարոտ. սա այն է, ինչ իր հետ բերում է պատերազմը: Այն մարդիկ, ովքեր անցել են այս ամենի միջով, շատ նման են իրար. նրանց հոգիներում դատարկ անկյուններ կան, որոնք ոչ մի բանով հնարավոր չէ լրացնել, ամբողջացնել:

Պատերազմից հետո մնում է ծանր լռություն, որով իրար հետ հաղորդակցվում են երազանքները կորցրած մարդիկ: Նրանք իրար հետ խոսում են աչքերով, որովհետև ընկերոջ, հարևանի, որդու, ամուսնու հայացքում նրանք ամեն օր գտնում են իրենց հիշատակները, կորուստները և խաղաղության հավատը:

ՀՏԴ 821.19-32 Ավագյան
ԳՄԴ 84(5Հ)-44

Գրքի գլխավոր գործընկեր՝
«Թովմասյան» հիմնադրամ
tovmasyanfoundation.com

Գրքի գլխավոր հովանավոր՝
«Ամրոց» ազգային զարգացման հիմնադրամ
amrots.foundation

ISBN 978-9939-967-70-7
Հերմինե Ավագյան, «Հրաժեշտի աչքեր» © 2025, «Նյու Մեգ» ՍՊԸ

Այս գրքի հրատարակության իրավունքները պատկանում են «Նյու Մեգ» ՍՊԸ-ին: Իրավունքները ձեռք են բերվել հեղինակի հետ կնքած պայմանագրով:

Բովանդակություն

Մի կում սուրճ, մի գավաթ անցյալ 7
Վերջին ընթրիքը 15
Հրաժեշտի աչքերը 23
Տղամարդկային լռություն 31
Կոնֆետները մնացին հեռվում 35
Այնտեղ ապրում է հիշողությունը 41
Բոլորը գնում են՝ բացի պատերազմից 47
Քաղաքը, որը չկա 53
Հավերժության օրենքը 59
Ցուրտ օրերի տաք հիշողությունը. 67

Մի կում սուրճ, մի գավաթ անցյալ

Առաջ ես սուրճ չէի խմում, որովհետև այսքան հիշելու բան չունեի: Գուցե դա էր պատճառը, որ քիչ էի կարոտում կամ ժամանակ չունեի հիշելու, ոչ էլ առավել ևս՝ այդ առիթով սուրճ խմելու: Հիմա հիշողությունս կարծես վերականգնվում է. ամեն օր սուրճ եմ խմում և հիշում այն մարդկանց, որոնց հետ կարող էի սուրճ խմել, իսկ հիմա չեմ կարող, որքան էլ ցանկանամ: Այն տարիներին ժամանակ ունեի, իսկ հիմա ժամանակը կանգ է առել ու մնացել այն մարդկանց հետ, որոնք հիմա իմ հիշողության մեջ են: Դատարկում եմ սուրճի գավաթը և փորձում երևակայել, թե ինչ կխոսեի նրանց հետ, եթե միասին գնայինք մոտակա սրճարանը, պատվիրեինք մի-մի բաժակ դառը սուրճ ու զրույցի վերջում կեսական գդալ շաքարավազ ավելացնեինք արդեն գրեթե դատարկ բաժակների մեջ՝ օրվա դառնությունը մեղմելու համար:

Հիմա ես ապրում եմ քաղաքի ամենահեռավոր կետում, ուր տեղափոխվել են նրանք, ովքեր չեն հոգնում քայլելուց: Ավտոբուսներն այստեղ չեն հասնում, ուր մնաց՝ գնացքների կանգառներ գտնեք: Այստեղ հասնելու համար պետք է զգալ

հիշողությունների մեջ քայլելու հաճույքը: Այս ճանապարհով քայլում են ինձ պես հիշողությունը կորցրած ու վերագտնել փորձող մարդիկ, որոնք գալիս են իրար հետ սուրճ խմելու և մի քիչ ապաքինվելու: Այստեղ գալը պետք է ցանկանալ, այլապես տեղ չես հասնի: Մարդն ինքը պիտի ցանկանա բուժվել, առաջին հերթին՝ ինքն իրենից, հետո՝ մյուս հիվանդություններից. ամենաչբուժվողն ինքն իրենիցն է, որը տարածվում է կայծակնային արագությամբ՝ օդով, ջրով, ցամաքով...

Բարդիների տակ փոքրիկ սեղան կա: Մեր հանդիպման վայրն է: Դարձյալ ուշացել եմ. հիշողությունս վաղուց եկել, սպասում է ինձ: Հագել եմ նույն ծաղկավոր զգեստը, որով վերջին անգամ դուրս եմ եկել մանկությունից: Դուրս եմ եկել անվերադարձ: Հիշում եմ՝ շատ էի ուզում հետ գնալ, բայց այդպես էլ չհասցրի. նկատեցի, որ մեծացել եմ: Այդ օրը երբեք չեմ մոռանա. ծաղկավոր շորս հագած՝ ցատկապարան էի խաղում: Շորս երկար էր, քսվում էր պարանին ու խանգարում: Այդ պահին մտածում էի՝ մաման էլի զգեստս մի չափով մեծ է գնել, ախր, ինչո՞ւ է ամեն անգամ մեծն առնում. ուզում է, որ շո՞ւտ մեծանամ, թե՞ փողն է խնայում, որպեսզի հաջորդ տարի էլ հագնեմ: Երևի այդպես էլ չգտնեի այդ հարցի պատասխանը, եթե որպեներ անց չպայթեին առաջին ռումբերը...

Հիմա շորս մի քիչ սեղմում է, մի քիչ էլ կարճացել է, բայց քանի որ այս տարիներին չեմ հասցրել քաշ հավաքել, ապա կարելի է ասել՝ լավ է, նույնիսկ սազում է: Ինչքան էլ սեղմի, իմն է:

Պետք է հենց այդ զգեստը հագնեի, որ հեշտ ճանաչեր ինձ:

Ձեռքով է անում:

— Այդքան հե՞շտ ճանաչեցիր: Հաստատ շորիցս ես ճանաչել:

— Չճանաչելու համար պետք է կա՛մ մոռացած լինեի, կա՛մ էլ դու լինեիր փոխված: Նույնն ես՝ ծաղկավոր զգեստով երազողը:

— Նա, ով տեսել է, թե ինչպես են երազները հեռանում մեկ գիշերվա մեջ:

— Բայց նրանք քեզ չեն ասել, չէ՞, որ երբեք հետ չեն գալու:

— Դու կարծում ես՝ մենք ինչ-որ տեղ նորից կհանդիպե՞նք:

— Ինչ-որ մի տեղ, ինչ-որ մի ժամանակ:

— «Ինչ-որ մի տեղ» ասում են նրանք, ովքեր հաստատ գիտեն, որ էլ չեն հանդիպելու: Ինչ-որ մի տեղը միակ վայրն է, որը գլոբուսի վրա չես գտնի: Այն ո՛չ քաղաք է, ո՛չ գյուղ: Դա երևի բոլոր մոլորված մարդկանց հասցեն է, Բերմուդյան եռանկյունու պես: Գնում ես ու չգիտես ինչու անհետանում, որովհետև ինչ-որ մի տեղ աշխարհ չկա, վերջանում է...

— Իսկ քո կարծիքով՝ ես որտեղի՞ց եմ գալիս...

— Չգիտեմ, բայց ուրախ եմ, որ եկել ես...

— Մենք երկուսս էլ այդ ինչ-որ մի տեղից ենք հայտնվել, և այդ ինչ-որ մի տեղից մի օր կգան իմ ու քո հետևից: Չես իմանա, թե երբ կգան, գուցե ամենաանհարմար պահին, երբ չես սպասում: Ուստի պետք է կիսատ գործեր, կիսատ մտքեր չունենաս, կիսատ սրտով չապրես, մարդկանց կես աչքով չնայես...

— Կօգնե՞ս ավարտել կիսատ թողածներս...

— Դրա համար արի հասկանանք՝ մինչև ուր ես հասել...

Շրջում եմ սուրճի գավաթը: Տատս էլ էր այդպես անում, որպեսզի իմանա՝ հարևաններն իրենից երբ են բամբասում ու ինչ: Հիմա ես ուզում եմ իմանալ՝ ժամանակը երբ է հասցնում ինձնից բամբասել և ում հետ: Նա կարողանո՞ւմ է հետ գնալ ու գտնել այն մարդկանց, որ ինձ ճանաչում էին, որ կարող են ինձնից բամբասել, բայց հիմա շատ հեռու են: Երանի՜ ես լինեի

ժամանակի փոխարեն, այնքա՜ն բան կանեի, այնքա՜ն բան կիմանայի:

— Հիմար ժամանակներում ենք ապրում: Այսքան հիմար ժամանակ չեմ տեսել երբեք, ա՜խր, այսքան հետաքրքրություններ մեջ այսքան հիմար կլինե՞ն,– ասում է ու շրջում բաժակը:

Մատուցողուհին նայում է շրջված գավաթին, կիսադեմով ժպտում է.

— Հավատո՞ւմ եք:

— Ինչի՞ն:

— Դե, որ շրջել եք բաժակը:

— Չգիտեմ,– ասում եմ, – առաջին անգամ է, ուզում եմ տեսնել՝ բաժակ շրջելիս մարդիկ ինչ են մտածում:

— Եվ... ի՞նչ մտածեցիք Դուք:

— Մի քանի վայրկյան տևեց, հետո մի քանի վայրկյան էլ կտևի, երբ նորից հետ շրջեմ, մի քանի վայրկյան՝ մեջն անիմաստ պատկերներ գտնելու, հորինելու, երևակայելու համար: Ինչքան անիմաստ վայրկյաններ ենք տանուլ տալիս մեր կյանքում, մեր միակ ու անկրկնելի կյանքում. այն, որ այս բաժակի չափ է ընդամենը, այս սուրճի պես դառն է, այս շաքարի պես քաղցր... Այն, որ խմում ես ու վերջանում է, մնում է մրուրը, որին նայում են քեզնից հետո եկողներն ու զոռ տալով երևակայությանը՝ քո մասին լավ ու վատ պատկերներ հորինում:

— Տանե՞մ Ձեր բաժակը,– ժպտում է:

— Չէ՛, ես դեռ զրուցում եմ:

— Ո՞ւմ հետ:

— Մեր միջև նստած մարդու:

Ապշահար կկոցում է աչքերը, շուրջը նայում, ապա արագ քայլերով հեռանում:

Ի՜նչ լավ է, ուրեմն ես գիժ եմ, կամ էլ ինքը դեռ գիժ չէ: Երանի՜ գժերին, որովհետև աշխարհի կոչվող այս մեծ գժանոցում միայն նրանք են, որ մարդավարի են ապրում:

Նա նույնպես նայում է հեռացող աղջկա հետևից, ժպտում է:

— Դու հիշո՞ւմ ես մեր մանկության ամենատխուր երեք դեպքերը,– հարցնում է ինձ:

Մտածում եմ:

— Հա՛, հիշեցի: Երբ փոքր էի, հարևանի աղջիկը գյուղատնտեսական սուր գործիքով ծակեց ոտքս: Դիտմամբ չէր արել, խաղում էր գործիքով: Հիշում եմ մե՛րթ արյան, մե՛րթ նրա սփրթնած դեմքի գույները: Շատ խնդրեց, որ ոչ ոքի չասեմ. վախենում էր ծնողներից: Եվ ոչ ոք չիմացավ ո՛չ մեր տանը, ո՛չ իրենց տանը, ո՛չ մարզային հիվանդանոցում: Խոստացել էի: Դա իմ առաջին լռությունն էր: Տխուր էր, բայց այդպես ճիշտ էր, դրանից ինձ համար ոչինչ չէր փոխվի, մի քանի բան կփոխվեր ուրիշների համար...

Երկրորդը.

— Երեք տարեկան էի: Գյուղում մեր հարևաններից մեկը շշնջաց՝ բերում են: Մյուսը թե՝ տարե՛ք երեխային, շո՛ւտ արեք: Ու ինձ տարան տնից, մի քանի օր չթողեցին՝ տուն վերադառնամ, որպեսզի չիմանամ: Հորս թաղումից երեք օր անց վերադարձա: Բոլորը կարծում էին, թե ես ոչինչ չգիտեմ: Մտածեցի, որ երևի լավը դա է, թող ոչինչ չիմանամ: Նրանք էլ մտածում էին, որ ինձ համար լավը դա է, ես մտածում էի, որ նրանց համար լավը դա է: Դա իմ երկրորդ լռությունն էր: Ամեն դեպքում տխուր էր, որովհետև դրանից ոչինչ չէր փոխվի, նրանց համար շատ բան կփոխվեր...

Երրորդը.

— Մի օր հասկացա, որ աշխարհում ամենավատ բանը մեռնելը չէ, այլ մեռնելու պահին քեզ միայնակ զգալը: Մահամերձ պապս կանչեց ինձ ու ասաց՝ մառանում գումար ունեմ պահած: Կառնես այն, ինչ չեմ հասցրել քեզ համար առնել: Ես այդ պահին հիշեցի բոլոր այն գեղեցիկ իրերն ու հագուստները, որ տարբեր առիթներով ուզում էի գնել, բայց հնարավորություն չունեի: Իսկ պապս բոլոր հնարավոր առիթներով փող էր հետ գցում՝ ինչ-որ բանի համար: Ինքն էլ չգիտեր, թե ինչի համար: Երբ մահվան մահճում ինձ ասաց դրա մասին, արդեն մեծ էի ու արդեն չէի ուզում այն ամենը, որոնցով ժամանակին կուրախանայի: Ժամանակի ընթացքում ինքս ինձ համարյա համոզել էի, որ դրանք անպիտան բաներ են, որ դրանց համար չարժի լաց լինել: Չէի ուզենա այդ մտորումներիս մասին հիշել, եթե մահանալիս ակամա չհիշեցներ: Նա կորցրել էր ժամանակի զգացողությունը: Եվ նրան ասացի, որ, այո՛, ես տասը տարեկան եմ, և, այո՛, դրանք ինձ պետք են, շնորհակալ եմ պահ տված գումարի համար... Նա հանգիստ փակեց աչքերը: Գոհ էր իրենից: Դա իմ երրորդ լռությունն էր: Ամեն դեպքում տխուր էր, որովհետև դրանից նրա համար այլևս ոչինչ չէր փոխվի, ուրիշների համար կփոխվեր...

— Հիմա դու ինչո՞ւ ես եկել ինձ հետ սուրճ խմելու:

— Եկել եմ, որ հիշեմ ինձ:

— Բայց դու այդքան բան ես հիշում: Ես դիտմամբ էի հարցնում:

— Ես հենց նոր հիշեցի դրանք: Դա սկիզբն է, իմ սկիզբը: Ես մոռացել էի իմ սկիզբը, այդ պատճառով կիսատ էի ապրում: Հիմա կիսատ չեմ...

— Խմի՛ր սուրճդ, ու պարտադիր չէ՝ շրջես բաժակդ. դա քո գործը չէ, դա ապագային թո՛ղ: Դու արդեն գիտես քո անցյալը, ուրեմն ապագան կարևոր չէ: Ինքդ քեզ հետ մնա, որ հետո կարողանաս քեզնից առաջ անցնել:

Ոտքի եմ ելնում և սկսում քայլել: Շորս նեղում է: Բայց ոչինչ, կարևորը՝ այս շորը պատմություն ունի, որն իմն է... Գրպանիս մեջ քաղցրաբլիթ եմ գտնում, քայլում եմ՝ փշուրները շաղ տալով, որ ճնճղուկներն ուտեն:

— Չմոռանաս ճանապարհը, մեկ էլ տեսար՝ ծիտիկները կերան, ու կորցրիր վերադարձիդ ուղին...

Վերջին ընթրիքը

Տղամարդը հավաքեց չոր փայտերը, դարսեց իրար վրա ու վառեց կրակը: Երկինքը կլանում էր կայծերը ու հետ չէր տալիս. երկինքը սովոր է ձեռքն ընկած ամեն ինչն առնել-տանել: Ուզեց լաց լինել, բայց զգաց, որ աչքերը չոր են մնում: Սիրտը լցված էր, բայց ներսի բոլոր դռները փակ էին, արցունքը մնում էր ներսում: Ներսում ո՛չ շարժվելու, ո՛չ փախչելու տեղ կար, ո՛չ ապրելու կամք:

Գուցե արդեն մեռա՞ծ է, գուցե իր ուրվակա՞նն է կրակի կողքին...

Կրակի բոցերը քչացել էին, այրող ու թեժ խանձողներ էին մնացել մանղալի վրա: Վեր կացավ, մտավ տուն, բացեց սառնարանն ու հանեց խորովելու համար նախատեսած ձկները, որ երեկ էր իրենց գետից որսացել:

— Ի՞նչ ես անում,– կնոջ ձայնից թիկունքը սառեց:

— Խորված:

Կինը վախեցած հայացքով նրան նայեց:

Տղամարդն առաջ անցավ:

ամբողջական գիրքն այստեղ է՝
Bookmark